ՍՈՒՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նշված խնդիրները ծառանում են գերմաներենի գործնական ուսուցման գործընթացում և պայմանավորված են ինչպես գերմաներենի, այնպես էլ մայրենի լեզվի հնչույթային համակարգերի յուրահատկություններով: Այս առումով Ն.Տրուբեցկոյը նշում է, որ լեզվի հնչույթային համակարգը նման է մի մաղի, որի միջով խոսողը անցկացնում է տվյալ լեզվին բնորոշ հնչյունները: Երբ լսում ենք օտար հնչյուններ, ապա ակամա կերպով դրանք փորձում ենք անցկացնել մեր մայրենի լեզվի ,,հնչույթային մաղի,, միջով:[1] Այդպիսով օտար լեզվում առանձնացվում են այն հնչույթները, որոնք ունեն իրենց համարժեք-ները մայրենի լեզվում, իսկ մյուսները մնում են ,,մաղի,, մեջ հետագա վերլուծության ակնկալիքով: Ահա այդ ժամանակ էլ ծառանում են օտար հնչույթների յուրացման գործնական խնդիրները:

Որքան էլ տարօրինակ թվա, համապատասխան հետազոտությունները ցույց են տալիս, որ ավելի հեշտ են յուրացվում լեզուների միջև առկա հնչաբա-նական առավել մեծ տարբերությունները, քան նվազագույնները: Վերջիններս պահանջում են վերոհիշյալ ,,մաղի,, մեջ մնացած հնչույթների առավել մանրակրկիտ վերլուծություն և հնչյունաբանական վարժությունների բազմա-կողմանի համակարգ, քանի որ ընդհանուր գծերով մայրենի լեզվի իրենց համապատասխանների հետ համընկնելով, ցուցաբերում են շատ նուրբ, բայց նաև կարևոր հնչաբանական յուրահատկություններ: Հաջորդ բարդությունն այն է, որ մի շարք հնչույթներ չեն հանդիպում սկզբնային կամ վերջահար դիրքում: Որպես օրինակ նշենք,որ գերմաներենում ձայնեղ պայթական և շփական բաղաձայնները բառավերջում որպես այդպիսիք չեն հանդիպում: Ասվածը վերաբերում է նաև կոկորդային [h]-ին: Բացի այդ, սկզբնային դիրքում առանձին հնչույթներ ցուցաբերում են մեծ տարբերակայնություն, թեև այստեղ նույնպես գոյություն ունեն սահմանա-փակումներ: Այսպես, օրինակ [s]-ն և [ŋ]-ն երբեք սկզբնային դիրքում չեն հանդիպում, իսկ [x]-ը՝ միայն փոխառյալ ձևերում: Նման

[1] Trubetzkoy N.S., Grundzüge der Phonologie, Göttingen, 1958, S.47.

երևույթների կողքին գոյություն ունեն նաև համակցման սահմանափակումներ և բացի այդ, հնարավոր կապակցությունների շատ քիչ մասն է գործածական: Դրանց միայն այն մասն է հեշտ յուրացվում, որոնք կա՛մ առկա են մայրենի լեզվում, կա՛մ էլ որպես համակցումներ բացատրելի են սկզբնային և վերջահար դիրքերում: Այդպիսով գերմաներենի [pf] հատույթը հայերենում բացատրելի է փ և ֆ հնչյունների միասնական արտաբերմամբ՝ ըստ հայերենի սպ, ստ, տկ և նման այլ հնչյունակապակցությունների արտաբերման սկզբունքի: Բնական է, որ վարժանքի միջոցով հաղթահարվում է շրթնայինի և շրթնատամնայինի միասնական արտաբերման դժվարությունը, քան որ հայերենին նման կապակցությունները բնորոշ չեն: Ընդ որում կարևոր է խուսափել երկու բաղաձայնների միջև հայերենի արտասանական բազայից բխող ∂/ը/ ձայնավորի արտաբերումից: Այս առումով նշենք, որ օտար հնչյունների յուրացման գործընթացում հիմնական խնդիրը մայրենի և օտար լեզուների արտասանական բազաների միջև գոյություն ունեցող տարբերությունների գիտակցված հաղթահարումն է, քանի որ հնչաբանական սխալների մեծ մասը պայմանավորված է այդ հանգամանքով: Այս խնդիրը այսօր գտնվում է, թե՛ լեզվաբանների, թե՛ մեթոդաբանների և թե՛ հոգեբանների ուշադրության կենտրոնում: Այժմ առաջարկվում է խնդրի խորքային լուծում և եթե նախկինում օտար լեզվի հնչաբանական առանձնահատկությունների յուրացումը ենթադրում էր ընդօրինակման ու կրկնությունների վարժական համակարգի մշակում, ապա այսօր կանոր է համարվում արտասանական օրգանների ընդհանուր դրության, դրանց շարժման ուղղությունների, ինչպես նաև մկանային լարվածության ճշգրիտ ուսումնասիրությունը, ինչն էլ ապահովում է նաև համապատասխան հնչարտաբերումը: Այս առումով շատ կարևոր է հնչարտաբերման ժամանակ բերանի խոռոչում լեզվի շարժման ուղղությունը: Համապատասխան փորձառական հետազոտությունները ցույց են տալիս, որ գերմաներենին և հայերենին բնորոշ է լեզվի այնպիսի շարժում, որ ցանկացած հնչյունն արտաբերելիս լեզուն հանգստի վիճակից սկզբում քաշվում է հետ, իսկ հետո ձգվում է դեպի առաջ: Մինչդեռ ռուսերենում ունենում ենք հակառակ պատկերը. հանգստի վիճակից

---

[1] Տե՛ս Խաչատրյան Ա., Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Եր., 1988, էջ 181-190 և Meinhold G., Stock E., Phonologie der deutschen Gegen-wartssprache, Leipzig, 1988, S.149-151.

լեզուն սկզբում ձգվում է առաջ և հետո միայն քաշվում է դեպի հետ:[1] Դրա հետևանքով էլ նախաքմայնացումը ռուսերենին բնորոշ հնչույթային հատկանիշ է, իսկ գերմաներենում և հայերենում՝ ոչ հնչույթային: Թերևս դա է պատճառը, որ գերմաներենի հնչույթային համակարգի յուրացումը մեզանում ընդհանուր առմամբ ընթանում է առանց բարդությունների: Այսուհանդերձ, գոյություն ունեն այլ խնդիրներ, որոնք պարզաբանման կարիք են զգում, քանի որ հնչարտաբերական սխալներ ուսուցման նախնական փուլում այնուամենայնիվ առկա են:

Հիշյալ խնդիրներից կարևոր է այն, որ մայրենի լեզվի արտասանական բազան և նրա առնմանական օրենքները գերիշխում են գերմաներենի հնչյունական առանձնահատկությունների յուրացման գործընթացում: Արդյունքում ունենում ենք ոչ միայն հնչյունաբանական սխալներ, այլև դրանց արտացոլում քերականության ու բառապաշարի մեջ: Այսպես օրինակ, վերջահար [-ən] վանկույթի սխալ արտաբերումը հանգեցնում է Herren հոգնակիի և Herrn հոլովված ձևի շփոթությանը: Գերմաներենի ձայնավորների քանակական և որակական տարբերությունների ոչ ճիշտ ընկալումը ի հայտ է գալիս sein, haben, werden բայերի խոնարհված ձևերում: Գոյություն ունեն, անշուշտ, մի շարք դրույթներ, որոնց հիման վրա բացահայտվում են առանձին հնչյունական իրողություններ կամ սկզբունքներ: Անժխտելի է նաև, որ կոնկրետ երևույթը նախ առանձին պետք է քննարկվի և հետո միայն զուգորդվի այլ փաստերի հետ: Ընդ որում զուգադրման ժամանակ կարևոր են ոչ միայն երևույթների միջև եղած տարբերությունները, այլ նաև նմանությունները: Այսպես, օրինակ՝ [s] հնչյունի առանձնացումը հնարավորություն է ընձեռնում ներկայացնել նրա հնչաբանական առնձնահատկությունները, իսկ դրա զուգադրումը [z]-ի հետ բացահայտում է նրանց հնչաբանական-արտասանական տարբերությունները: Միևնույն ժամանակ գերմաներենում գոյություն ունեն գրության և արտասանության տարբերությունների խնդիրներ: Տվյալ դեպքում խոսքը [s]-ի որպես s,ss,ß գրությունն է և [z]-ի՝ որպես առանձին s: Պետք է հաշվի առնել նաև հիշյալ հնչյունների դիրքը վանկում, իսկ հետագայում կարելի է նշված [s]-ն քննարկել որպես [ts] հնչյունակապակցության բաղադրիչ:

Հաճախ փորձ է արվում հնչյունաբանական խնդիրները ներկայացնել ոչ թե ըստ ուսուցման գործընթացի, այլ դրա ընթացքում ի հայտ եկող սխալների վերլուծության հիման վրա: Ընդ որում որպես այդպիսիք դիտարկվում են այն երևույթները, որոնք ներկայացնում են շեղում գրական լեզվի չափանիշներից: Մի

շարք գիտնականների կարծիքով հնչյունաբանական սխալների էությունը կարելի է պարզաբանել փոխանցման (Transfer) չափանիշներով: Դ.Կելցը առանձնացնում է փոխանցման երեք տեսակ.

1. դրական փոխանցում, երբ մեկ լեզվի տարրերը կարող են անխաթար անցնել մյուս լեզվին:

2. Բացասական փոխանցում, երբ մեկ լեզվի տարրերը սխալ կերպով են անցնում մյուսին:

3. Զրո փոխանցում, երբ որևէ փոխանցում բացառվում է:[1]

Կարծում ենք, որ բացասական փոխանցման համար կարելի է առաջադրել երկու մոտեցումներ.

ա/ յուրացման դժվարությունների ու սխալների պատճառների բացահայտում ընդհանրապես:

բ/ Յուրացման դժվարությունների ու սխալների պատճառների ստորակարգության սահմանում:

Առաջին մոտեցումը հնարավորություն է տալիս հաղթահարել գերմաներենի հնչույթային համակարգի յուրացման ժամանակ առաջացած դժվարությունները, իսկ երկրորդը մատնանշում է հնչյունաբանական նյութի մատուցման ձևը: Այդպիսով նկատի է առնվում ավելի հեշտից դեպի դժվարը և պարզից դեպի բարդը սկզբունքը: Մյուս կողմից, սակայն,պետք է կարողանալ առանձնացնել ի հայտ եկող սխալների ու դժվարությունների տեսակները: Լեզվաբանական և մեթոդական գրականության մեջ առաջարկվում են հիշյալ սխալների դասակարգման տարբեր չափանիշներ: Վ.Մուլտոնը հնչույթաբանական հիմքի վրա առաջարկում է նաև բաշխումային և հնչյունաբանական չափանիշներ: Այդպիսով նա տարբերում է սխալների հետևյալ տեսակները.

1. հնչույթային, ինչպես [x]-ի փոխարեն [k] „machen" ձևում:
2. Հնչյունական, ինչպես [R]-ի փոխարեն [r] „rot" ձևում:
3. Ենթահնչույթային, ինչպես [t^h]-ի փոխարեն [t] „Vater"ձևում:
4. Բաշխումային, ինչպես [ts]-ի փոխարեն [z] „zeugen" ձևում:[2]

Բնական է, որ այն ինչ դժվարություն է գերմաներեն ուսումնասիրող անգլախոսի համար, չի կարող այդպիսին լինել հայախոսի կամ ռուսախոսի համար:

---

[1] Kelz H., Phonetik und Phonologie, Bonn, 1989, S.77.

[2] Multon W.G., The Sounds of Englisch and German, Chicago, 1992, p.94.

Այդուհանդերձ, նման մոտեցումը, մեր կարծիքով, լիովին հիմնավորված չէ և անհասկանալի է, թե ի՞նչ տարբերություն կա հնչույթային և ենթահնչույթային սխալների միջև: Եթե մի պահ ընդունենք, որ համապատասխան սխալը մեկ լեզվում հնչույթային արժեք ունի, իսկ մյուսում՝ ենթահնչույթային, ապա ելակետային լեզվի համար դա միևնույն նշանակությունն ունի: Նշենք նաև, որ առաջարկվող համարյա բոլոր դասակարգումները թերի են, քանի որ հաճախ հաշվի չի առնվում հարցի շարակարգային նշանակությունը, եթե նկատի ունենանք, որ հնչյունն ի վերջո հնչաշարից դուրս հանդես չի գալիս: Կարծում ենք, որ կարելի է ընդունել դժվարությունների հետևյալ տիպերը.

ա/ օտար հնչույթներ,

բ/ նման հնչույթներ,

գ/ նման հնչույթներ օտար բաշխմամբ,

դ/ նման հնչույթներ օտար համակցմամբ:

Առաջին տիպին կարելի է հատկացնել գերմաներենի այն հնչույթները, որոնք չունեն իրենց համարժեքները մայրենի լեզվում և դրանց յուրացումը նախապես պահանջում է համապատասխան բնախոսական - հնչաբանական առանձնահատկությունների վերլուծություն: Խոսքը վերաբերում է գերմաներենի [ç],[ŋ][ø],[pf] և նման այլ հնչույթներին: Փորձը ցույց է տալիս, որ հաճախ այդպիսի հնչույթների յուրացումը կատարվում է նաև մայրենի լեզվի հնչույթների որոշ հատկանիշների վերանայումով: Երկրորդ խմբի մեջ են մտնում գերմաներենի $[p^h],[t^h],[k^h]$ տիպի հնչույթները, որոնք հայերենում առկա են որպես առանձին փ, թ, ք հնչույթներ, սակայն յուրացման ընթացքում ոչ հետևողականորեն է տեղի ունենում գերմաներենի p,t,k խուլերի շնչեղացումը, քանի որ հայերենն ունի նաև համապատասխան պարզ խուլերի շարքը: Երրորդ և չորրորդ տիպերը ներկայացնում են այն միավորները, որոնք գերմաներենում ունեն ենթահնչույթային արժեք: Այստեղ պետք է նկատի ունենալ գերմաներենի [l]-ի ավելի ,,բաց,, արտաբերումը, կոկորդային [a]-ն (Knacklaut), [-ig] կապակցության մեջ [g]-ի [ç] իրացումը կամ բառավերջի [d]-ի խլացումը և այլն: Ընդ որում կարևոր է առանձնացնել այն ենթահնչույթները, որոնք ունեն իրենց հայերեն համարժեքները և այնպիսիք, որոնք օտար են հայերենին (ç,ŋ և այլն):

Բոլոր այս վերլուծություններից հետևում է, որ առանձին խնդիր է դառնում գերմաներենի գրադարձության կանոնների տիրապետումը, որը առաջին հերթին ենթադրում է գրադարձական նշանի արժեքի գիտակցում: Բնականաբար,

օտար լեզվի հնչյունների յուրացման նախնական փուլում համապատասխան նշանը դեռևս տարբերակիչ նշանակություն չի ունենում: Այս դեպքում ծառանում է այն հարցը, թե օտար լեզվի գրադարձական համակարգը պետք է յուրացվի միանգամի՞ց, թե առանձին մասերով: Փորձը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ է երկրորդ մոտեցումը, քանի որ առաջին դեպքում միանգամից առաջադրվում է մեծ քանակով տեսական բնորոշումների յուրացում, ինչը ստեղծում է նկատելի դժվարություններ: Այդ առումով գերմաներենի ձայնավոր հնչյունների մատուցման ժամանակ առաջին հերթին կարևոր է լարված-երկար և ոչ լարված-կարճ հատկանիշների բացահայտումը, եթե նկատի ունենանք, որ դրանք գերմաներենում իմաստատարբերակիչ գործառույթ են իրականացնում: Այդպիսով հնչյունի արտասանական առանձնահատկություններին զուգահեռ կարելի է ներկայացնել նաև հնչաբանական արդյունքները: Դրանք, ինչպես նաև առաջին հայացքից ոչ անմիջականորեն ընկալելի հատկանիշները, ներկայացվում են արդեն համապատասխան գրադարձական նշանի միջոցով: Հետևաբար /o/-ի տարբեր իրացումները յուրացվում են միայն այնքանից հետո, երբ գիտակցվում է, որ [o:]-ի և [ɔ]-ի առանձնացումը բխում է դրանց իմաստատարբերակիչ դերից և ոչ ճիշտ իրացումը կարող է հանգեցնել հաղորդակցման խաթարմանը: Վերջինս հաղթահարվում է կոնկրետ գրադարձական նշանի արժեքի ճշգրիտ գնահատմամբ: Բնականաբար ասվածը չի վերաբերում այն երևույթներին, որոնք երկու լեզուներում էլ նույնական են:

Այսպիսով, գրադարձական նշանները կարող են ունենալ երկակի նշանակություն. ուղղախոսական՝ այն է գրական լեզվի արտասանական չափանիշների սահմանում և անհատական-խոսքային, որի հիման վրա անհատը յուրացնում է հիշյալ չափանիշները:

Կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ հնչյունաբանության հիմնական խնդիրն է պարզաբանել, թե ինչպե՞ս է արտաբերվում այս կամ այն հնչյունաբանական միավորը: Իսկ այդ հարցին կարելի է պատասխանել միայն այն բանից հետո, եթե կարողանանք ճշգրիտ պատկերացում կազմել ոչ միայն այդ միավորի հնչման մասին, այլ նաև, թե արտասանական օրգանների ինչպիսի՞ գործունեությունն է առաջացնում այդ հնչումը: